

## ՊԱՐՄԻՅԱ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՎԵՐՖԻՆ ՏԱՐԻՆ

(Ժամանակակից հայ յիշատակարանից)

Այն գաշնադրութիւնը, որ սահմանավարերի վերաբերութեամբ դրուած էր Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, մնում էր տակաւին անկատար. այդ գաշնադրութեանը Ռուսաց նիկողայոս կալսը ըստ արժանույն վախճան տալուց լետոյ՝ որպէս դեսպան Պարսկաստան ուղարկեց գեներալ մալիօր կնիազ Մենչչիկովին, որին և պատուիրեց կարճել այն վէճերը, որոնք տեղի ունէին մինչև այդ ժամանակ սահմանները սրոշելու առթիւ և առհասարակ հաստատուն պահպանել իւր կրած դաշը, ինչպէս ունէր և իւր նախորդ Աղէքսանդր Առաջինը:

1825 թուի լունուարին դեսպանը ճանապարհ ընկաւ տանելով իւր հետ լիակատար խաղաղութեան որոշումը և երբ հասաւ Դավրէժ՝ ֆաթալի շահի ժառանգ Արքաս Միրզայից վայելուչ պատուվ ընդունուեցաւ և վերջինս էլ ցոյց տուեց իրան սիրոյ և խաղաղութեան փափագող:

Ֆաթալի շահը դեսպանի գալլ երբ լսեց՝ հրաւիրեց նորան Սուլթանիա իւր բանակը կալսեր յանձնաբարութիւնը կատարելու:

Բայց Արքաս Միրզան, որ խարդախութեամբ իրան խաղաղութիւն սիրող էր ցոյց տալիս դեսպանին, վազուց արդէն տեղեկութիւններ էր հաւաքել Ռուսաստան գտնուող իւր հաւատակից վաճառականննրից թէ թագաւորանիստ Պետրոբուրգ քաղաքը նոր կալսեր յաջորդութեան առթիւ նշանաւոր մարդկանց դա-

ւաղըութիւններով շփոթուած է, և մի փոքր էլ գուշակելով, որպէս թէ կայսեր այս առաջարկուած դաշնադրութիւնը նորա տկարութեան մի ապացոյց էր, շտապեց զեսպանից առաջ Սուլթանիա իւր հօր Ֆաթալի շահի մօտ և նորա հետ խորհրդակցելուց լետոյ՝ վերադարձաւ Դաւրէժ, զօրք հաւաքեց և իւր հրամանատարութեան տակ պահեց:

Ալդ միջոցներում Երևանու սարդար Հիւսէին խանի եղբայր Հասան խանը, որ հետեւակ ու հեծեալ զօրքերով պահուած էր իւրեանց սահմանի մօտ Արագած լենների մէջ Ապարան կոչուած տեղը և սպասում էր լարմար առիթի, վազօրոք իմանալով Աբաս Միջալի գիտաւորութիւնը, ինքը լուլիսի 16-ին, ուրբաթ առաւտեան յանկարծակի յարձակուեցաւ Նիրակաւանի սահմանի վերայ գտնուած Ղարաքիլիսէ երեւելի գիւղի վերալ. պարսիկներն սկսան շրջապատուած արձակ կերպով կոռուել, իսկ գիւղացիք իրանց տներից. և այսպէս մինչև երեք ժամ դիմացան նոցա յարձակումներին և չէին թոյլ տալիս որ գիւղամէջ մանեն:

Ալս միջոցին գիւղին օգնութիւն եկան յիսուն հետեւակ զօրք երկու թնդանօթներով, և հէնց որ պարսից յարձակումը խորտակելու մօտ էին և պէտք է քըշէին այնտեղից՝ իսկ գիւղացոց ուրախութեանը չափ չկար, որ ազատում էին պարսիկներից, շտապով մի տաճիկ եկաւ ալդ տեղ սուտ գւաժկան ու տսաց՝—«ալդ ինչ էք անում, ահա զօրքը աւերում է միւս Ղարաքիլիսէն, ուր կնիսզի տունն է գտնուում»:

Խսկոյն և եթ յիսուն զինակիրներ թողին դոցա ու գնացին այնտեղ. և այն միջոցին, երբ փոքրիկ գունդը հեռացաւ իրանց գիւղից, ոամիկ ամբոխը նոցա յետեւից դուրս եկաւ, կարծելով թէ ազատութիւն ձեռք բերին, և ահա պարսիկները խառնուեցան ու շատերին սպանեցին, մնացածներին էլ գերի տարան. իսկ որոնք ընտանիքով մնացել էին իրանց տներում, երբ պարսից յարձակումը տեսան, մինչև յետին շունչը պաշտպանեցին իրանց, և գրեթէ շատերն ազատուեցան գերութիւնից, բայց շատերն էլ, թէ գիւղում եղածներից և թէ զօր-

քի ետևից ընկողներից, գերի տարուեցան, տղամարդիկ թէ կանալք, նորահարսներ և գեռահաս աղջիկներ և մատաղահաս մանուկներ, բոլորն էլ հալազգիներ, վիասուածների թիւը հասաւ մինչև երկու հազարի, որոնցից մօտ եօթանասուն հոգի սպանուեցան, երկու հարեւը չափ վիրաւորուեցան, իսկ մնացեալներն առհասարակ գերի տարուեցան. սոցագիւղի ուրիշ աւարի հետքերին Արարատեան կողմերը, նոցանից ամենագեղեցիկ տղաներին և աղջիկներին վիրցըրին իրանց համար՝ մնացեալ բոլորին իրանց նախնի բնական սովորութեան համաձայն վաճառեցին, որոնցից ոմանց հայ եկեղեցականներն ու ժողովրդականները ինչքան որ ոյժերը պատում էր թափեցին, և այն մեծամեծ վատանգների ու տառապանքների հանդիպելով, իսկ մնացեալները նոցա ձեռքով աքսորուեցան Պարսկաստանի ալս և այն կողմերը:

Թաթալի շահն ու նորա որդի Արաս Միրզան պատասխանեցին ոուսաց գեսպան գեներալ մալոր կնիազ Մէնշէլկովին՝ թէ պարձիր այնտեղ որտեղից որ եկար, որովհետեւ պատերազմ պէտք է ունենանք». և նորա հետ մի ուղեկից գնելով ուղարկեցին Երևան, որտեղից պիտի անցնէր ոուսաց սահմանը:

Եւ ինքը հաւաքելով քառասուն հազարի չափ ձւաւոր զօրք՝ արշաւեց զէպի ոուսաց սահմանը Արցախի, Նուխոյ, Շամախու և Գանձակի նահանգների վերայ և տեսնելով, որ այդ երկիրները զօրքից թափուը են՝ տիրեց մի քանի տեղերին, աղմկեց բնակիչներին և ալս ու այն կողմ ուղարկեց Երևելի մարզիկ՝ մահմեդականներին ապստամբեցնելու և դարձնելու իւր կողմը, և հոչակեց թէ այս պատերազմը կրօնական է լինելու:

Այս անակնկալ միջոցին ոուսաց մի գունդ ամրանալով Շուշու ամրոցում հազիւ պահպանում էր բերդն ու մէջը եղածներին. իսկ մնացեալ հայ ժողովրդի բազմութեան մի մասը մացառուտ տեղերում և խոր ձորերում ամրացան, իսկ միւս մասն էլ իրանց գիւղերում ուր կալին բնական ամրոցներ:

Պարսից այս անհաւատարմութեան լուրը երբ հասաւ Տփխիս՝ քաղաքը տակն ու վրալ արաւ բոլորովին, նոյն իսկ իրաւ Երմօլով զօրապետին, այնպէս որ քաղաքը դատարկուեց և քաշուեցին դէպի վեր, բայց վերին տեսչութեան խնամքը ալցելութեան գալով գաւառների բնակիչներին, մի քանի երևելիների խորհրդով յետէ դառնում նա իւր մտքից, այդ բոլորի մասին յարանում է Կալսեր, և ինքը մկնում է պատրաստութիւն տեսնել պարսից յարձակումներին դէմ դնելու:

Այս օրերում կնեազ Մէնշչիկովը, որ Շամիր խան Մելիք Փրկոնեանի հետ Հիւսէին խանի ձեռքով արգելուեցաւ Երևանում, հասաւ Տփխիս. և աւելի լաւ ծանօթանալով նորանից նոցա յարձակման հանգամանքներին, որին դեսպանը ինքը ականատես էր եղած, պատրաստեց հալազգի գեներալ մալիօր իշխան Ռստում Մադաթովին, որ մի քաջ ու սրտոտ տղամարդ էր, և փոքրաթիւ զօրքով սեպտեմբերի 2-ին ուղարկեց պարսից դէմ, որոնք Շամքու գետի աջ կողմն էին կանգնած, և որոնք բաղկացած էին 2,000 կանոնաւոր հետևակ զօրքից, մոտ 800 ձիաւորներից, 4 մեծ և 20 փոքր զամպարակ կոչուած թնդանոթներով. նոցա զօրապետներն էին. Մահմատ Միրզա և Ամիրխան սարդարը, որոնցից առաջինը շահի ժառանգ Աբաս Միրզալի որդին էր և միւսը քեռին. և ուրիշ երևելիներ:

Պարսից յառաջապահ գունդը հեռուից նկատելով ուսւաց զօրքը, պատերազմի պատրաստուեցաւ, և սպասում էր մինչև կը մօտենան իրանց. և հէնց որ մօտեցան մի ոմբաձիգ հեռաւորութեան վերայ՝ չորս թնդանօթ արձակեցին հրացանների հետ, բայց ուսւաց զօրքն իւր թնդանոթներով մեծ վնասներ սկսեց տալ պարսից հեծելազօրքին և յանկարծակի յարձակում գործելով նոցա վերայ՝ պարսից բոլոր գունդը ցրուելով ստիպեցին փախչել պատերտօմի դաշտից: Ալդ միջոցին Աբաս Միրզալի որդի Մահմատ Միրզան յետ գառնալով տշխատում էր մի կերպ ազատուել, միւսնոյն վիճակին ենթարկուել էին նաև միւսները նորա ետևից. սակայն նոցա հետեւակ զօրքը մնում էր առանց օգնութեան, որոնց ետե-

ւից ընկնելով ռուսաց հեծելազօրքը, որ 800 հոգի վրացիներից ու մասամբ Ղազախ դաւառի թաթարներից էր բաղկացած, նոցա առջևը կապեցին, պարսիկները ահով պատաճ և անպաշտպան մնալով հազիւ մի անգամ էլ դէմ դրին. իսկ այնուհետև ռուս զինուորները մօտ 10 ասպարէզ հալածեցին նոցա սրի անցկացնելով ամեն պատահողի նոցանից. Այս փախստականները հազիւ կարողացան զունչ առնել Գանձակի մօտ Զէլվա գետի միւս ափն անցնելով:

Այս պատերազմի մէջ պարսիկներից ընկան երկու նշանաւոր խաներ (մէկն էր Աբաս Միրզալի քեռի Ամիրխան սարդարը) և հազարից աւելի դիակներ մնացին պատերազմի դաշտում և փախած ճանապարհին. Թողին մի մեծ թնդանօթ և 11 փոքր, այլ և մի քանի արկղ վառօդ:

Սորանից յետոյ իշխան Մադաթովը դիմեց դէպի Գանձակ և գրաւեց քաղաքն առանց որ և է ընդդիմութեան սեպատեմբերի 4. ին: Գանձակի ամրոցում գտնվում էր պարսից 1,500 վարժուած հետևակ զօրք. երբ սոքա լսեցին իրանց զօրքի պատրաստութիւնը և Մադաթով իշխանի իրանց վրայ գալը՝ առանց ձայն հանելու խոլս տաւին ազատուելու նորանից. իսկ ռուս զօրքը ընկաւ նոցա ետևից մինչև քսան ասպարէզ և չհասնելով փախստականներին՝ յետ դարձան Գանձակ ու տիրացան նոցա առատ ուտեստի պաշարին՝ և մասնաւոր վառօդին ու արճինին:

Այս յաջողութիւնները լսելով Տփխիսի զօրապետ Երմօլովը մի փոքր սիրտ առաւ. մանաւանդ երբ լսեց, թէ Ղարաբաղի հայ և մտհմեղական բնակիչները ցանկանում են այն կողմերի ռուս զօրքերին դիմել, որ միանալով նոցա հետ թշնամիների ոտքը կտրեն ալյնտեղի սահմանից և ապստամբութեան գարզ անունը մաքրեն, շուտով գրեց գեներալ ադիւտանտ Պասկվիչին, որ շտապէ գալ և միանայ Մադաթովի հետ ու դիմէ դէպի Ղարաբաղ:

Պասկվիչն ընդունելով այս գրութիւնը օդնութիւն է հասնում իշխան Մադաթովին զօրքով, և հէնց որ

մտադրում են յարձակուել Աբաս Միրզակի բանակի վերալ, որ քառասուն և ինն օր պաշարած ունէր Շուշուամբոցը, ինքն Աբաս Միրզան պաշարումը անօգուտ համարելով՝ զալրացած յարձակում է ռուսաց բանակի վերալ, որ բանակուած էր Դանձակում, որ գոնէ նոցանից առնէ իրան հարուածողների վրէժը:

Սակայն Պասկեփչը Մազմաթովի աջակցութեամբ առաջ է մղում իւր սակաւաթիւ զօրքը, խորտակում է պարսից բազմամբոխ բանակը, հալածում է առջևից թշնամուն, գերի է վերցնում նոցա հետևակ զօրքից հազարաւորներին, և շատ շատերին հեծեալներից և հետևակներից կործանում է գետին. իսկ արքայորդին սրբնթաց տագնապով նժոյգ երիվարների օգնութեամբ Երասխ գետից անցնելով դէպի իրանց սահմանը՝ հազիւ կարողանում է իր գլուխը ազատել լաղթողների հետևող սրից:

Սակայն այս յաջող պատերազմից յետով ռուս գլուխուները եթէ բաւական պաշար ունենալին՝ հալածելով մինչև իսկ Դաւրէժը կուզէին առնել միւնոյն ամսին (սեպտ.), բայց որովհետեւ պատերազմը նոր էին աւարտել և պատերազմական կարևոր պարագաների պատրաստութեան պէտք ունէին, ուստի գոնէ մի երկիւղ ազդելու թշնամիներին՝ անցան Երասխ գետը, փախցըին այնտեղից ևս արքայորդուն, տիրեցին ալդ նահանգներին և յետ դարձան ձմեռուան խստութիւններից պատըսպարուելու համար:

Տիխիս մտներով պատրաստութեանց յետևից ընկան. հինգ ամսուան ընթացքում պատրաստեցին ամեն բան ինչ որ հարկաւոր էր պարսիկների հետ պատերազմ մըղելու համար, արձակուեցաւ առաջընթաց զօրքը 1827 թուի ապրիլի սկզբին, որոնք մտան Էջմիածին նոյն ամսի 13-ին, և երկու օրից յետոյ ուրբաթ օրը պարսից այն զօրքը, որ սարդարի եղբօր Հասան խանի առաջնորդութեամբ առաջուց ժողովուել էին, եկան մեծ կաթուղիկէի արևմտեան կողմից. և հէնց որ սոցա գալն իմացուեց՝ Բէկէնդօրֆ Կոստանդինը վերցնելով 1000 հոգի հետևակ զօրքից, երկու թնդանօթ և հեծելազօր-

քիցն էլ՝ յարձակուեցաւ նոցա վերայ, և պատահելով  
միմեանց Սեաւ ջրի ակունքների մօտ՝ յարձակուեցան  
միմեանց վերայ և ընկան երկու կողմիցն էլ. այս փոք-  
րիկ պատերազմի ժամանակ բռնեցին պարսից գնդից  
Խոմալէլ խանին և քրդերիցն էլ ընկան քոջ և անուա-  
նի մարդիկ Զամալտնցւոց տոհմից, իսկ նոցանից մէկը,  
որի անունը Կօրօ էր, և մի գոռ պատերազմող էր, մեծ  
քաջութիւններ գործեց և սրարշաւ ձիով ներս մանելով  
ռուսաց հեծելազօրքի մէջ՝ լետ էր դառնում. բայց վեր-  
ջապէս փորոտիքին վէրք ստանալով՝ ազատուեց իրանց  
զօրքի մէջ, որին տանելով Սարդարապատ բժիշկ կանգ-  
նացրին վրան՝ և մի փոքր առողջութիւն գտնելուց լետ՝  
զնաց իւր ընտանիքի մօտ:

Ռուսաց զինուորներն ալսպիսով հասան Սարդարա-  
պատի նորաշէն ամրոցին, սկսան զննել, և պատգամ  
ուղարկեցին նորա մէջ եղած բերդապահների գլխաւո-  
րին, որ հնազանդուի իրանց, բայց արժանաւոր պա-  
տասխան ստանալով՝ արձակեցին ամրոցի վերայ մի քա-  
նի ռումբ, որից բերդապահների գլխաւորներից մի քա-  
նիսը վնասուեցան և նոցա հետ մի ապալապանճիս ու քա-  
նի մի մարդ. զօրքն ալի գիշեր մնալով ալնտեղ՝ առա-  
ւոտեան վերադարձան էջմիածին իրանց բանակատեղին:

Ապրիլի 20-ից մինչև մայիսի 24-ը ալնտեղ հան-  
գըստանալով զօրքը գնաց և Երևանը պաշարեց. քանի  
մի օրից լետով սուրբը Էջմիածին մտաւ Եւ մեծ զօրա-  
պետ Պատկիւը. և լսելով թէ զօրքը Երևանալ զուրջն  
է՝ շտապեց միւս օրն Երևան հռչակաւոր բերդը զննե-  
լու. և ուշի ուշով քննելով՝ տեսնում է որ առանց մե-  
ծամեծ թնդանօթների անհնար է Երևանու բերդն առ-  
նել. ուստի քակելով պաշարումը զօրքը բերում է էջ-  
միածին. և խորհրդակցելով վճռում է նախ գնալ Աբա-  
սապատ ամրոցի վերայ, մինչև որ կհասնեն իւր խընդ-  
րած մեծ թնդանօթները.

Ալնուհետև տկարներին ու հիւանդներին զօրքի  
մի մասի հետ ուղարկում է Արակի լերան ստորոտը մի  
ապահով տեղ և բոլոր ծանրութիւննը թողնելով Էջմիա-  
ծին հինգ հարիւրի չափ հետևակ զօրքի պահպանու-

թեան ներքոյ՝ ինքը վերցնելով զօրքի մնացեալ բանակը լունիսի 5 ին ուղղում է դէպի նախիշևան, ուր հասնելով՝ պաշարում է Աբասապատ ամրոցը, որ փոքր ժամանակից անձնատուր է լինում և մինչև որ սա տի ըում է այս ամրոցին, Աբաս Միրզա արքայորդին բազմաթիւ հետևակ ու հեծեալ զօրքով ուրիշ ճանապարհով գալիս է անցնում Օշական գիւղի դաշտը և բանակուելով ամուր տեղերում ու ճանապարհների անցքը կալնելով երկու կողմից՝ օգոստոսի 13-ին հետևակ զօրքի մի վաշտ թնդանօթներով ուղարկում է պաշարելու էջմիածնի ամրոցը. սոքա գալով Հռիփսիմէի վանքի ետևի կողմը թնդանօթներն ուղղեցին դէպի էջմիածնալ պարիսպը և տեսնելով որ այնտեղից թնդանօթի ուռումբն անզօր է ներգործելու՝ գիշերն առաջ եկան Շողակաթի տաճարի պատի տակով, թնդանօթները դարսեցին պարապի հիւսիս արևելեան թևի վերալ, որով սարսափեցան բոլորովին էջմիածնալ պարսպի ներսը գտնուող եկեղեցականները, որոնց մէջն էին և Տփիփսի ներսէս արքեպիսկոպոսը և ոռուսաց մի փոքր գունդ, որոնցից գըեթէ կէսը հիւսանդութեան պատճառով անգործ էին, բայց նոցա գլխաւոր գնդապետը, որ խիստ վարժ էր ոմբաձըգութեան մէջ, ինքն անձամբ կառավարում էր մենաստանի բրջերում դարսած թնդանօթներն և հարուածում էր թշնամիներին ու նոցա թնդանօթները:

Մինչև որ այսպէս հինգ օր պաշարուած դրութեան մէջ էին, նոքա գաղտնի մի մարդու ձեռքով իմաց են տալիս գեներալ լէլտէնանտ Ա.Փանասի Կրասովսկուն, որ միւս զօրքերի հետ Արալի լերան ստորոտում ապահով բնակութիւն էր գտել. նա անլապաղ օգոստոսի 17-ին 2500 հետևակ և 500 հեծեալ զօրքով ու 12 թնդանօթներով գալիս է օգնութեան, մնացեալ զօրքի դերքը ամրացնելով թշնամիների լարձակումներից, որի մասին երբ իմացան պարսիկները, որոնք զգուշութեամբ պահպանում էին ճանապարհների անցքերն ու կիրճերը և ճանապարհի այս ու այն կողմի ամրակուռ տեղերը, և նոցա հետ իմանալով նաև էջմիածին պաշարողները՝ լոիկ մնջիկ գնացին ու միացան իրանց բուն բանակի հետ:

Եւ հէնց որ միւս առաւօտ լուսաբացին Կրտսովսկի զօրապետը գնաց մտաւ թշնամիների դաւադրած ճանապարհները, ուր պարսկները մորեխի պէս թափւում էին ամեն կողմերից և թնդանօթներն ու հրացանները տեղում էին ամեն կողմից կարծես թէ երկնքից ծծումք լինէր տեղում, ուստ զինուորները ճեղքելով նոցա բազմութիւնը հասան մինչև այնտեղը, ուր 1477 տարի առաջ, այն է փրկչական 851 թուին Ղահան Ամատունին ծիրոջ շնորհքով զօրացած՝ գետին գլորեց հիւսիսականաց Կաւկասեան գնդի հսկալ զօրագլուխին և խսպառխորտակեց նորա զօրութիւնը. այնտեղ իսկ պարսկի արքայորդին սաստկացրեց իւր պատերազմը. այլ ոռւսաց բանակը ալդ միջոցին երեք էր բաժանած. առաջինը մեծ թնդանօթներով մօտենում էր ալդ միջոցին էջմիածնի ամրոցին, վերջին գունդը, որի հետ էր նաև ինքը զօրապետը, տակաւին կամաց կամաց ցած էր իջնում զառիվալրից և դիմագրում էր սաստիկ յարձակումներին. իսկ միջին գունդը, իւր երկու վերոլիշեալների մէջ տեղումն էր, հէնց որ մօտեցաւ Գետառ կոչուած ալգիների առումին՝ այլ ևս չկարողանալով ծարաւին և խորշակին դիմանալ արևակէզ աշխատութիւններից լետ, երբ ամենսին ջրի հանդիպած չէին, զինաթափ լինելով ջուրը մտան, որոնց վերալ յարձակուեցան պարսից հեծելազօրը, որ գարան էր մտած այնտեղ, և սրերի ու նիզակների հարուածներով սպանեցին ջրում եղած հարիւրաւոր զինուորներին, և գերի տարան երկու հարիւրից աւելի մարդ, մինչև որ վերջին բանակը օգնութեան հասաւ, որն որ հալածեց ու ցրուեց նոցա և իւրալիններից մնացածներին որից ու գերութիւնից պատելով տարան իրանց հետ սուրբ էջմիածին:

Այս պատերազմի մէջ, որ տասներկու ժամից աւելի տևեց հազիւ չորս ժամուալ ճանապարհի վերալ, ոռւսաց քաջերից ընկան մօտ 1131 մարդ և ալդ օրը որոշուեցաւ իբրև Արարատեան աշխարհի սուրբ Տաճարի կաթողիկէի ազատութեան լիշտակ ամեն տարի օգոստոսի 17 ին տօն կտարել միևնուն սրբութեան տաճարում:

Իսկ Սըրաս Միքաղալի արքալորդին կարող էր ուրախ լինել այս հարուածի վերալ, եթէ իրանցից ընկած դի-ակների թիւը հինգ անգամ աւելի չլինէր քան իրանց հակառակորդներից ընկածները, ուստի ալդ փորձից վա-խեցած և լուսահատուած մտատանջութեան մէջ էր. և այն ինչ գեներալ Կրասովսկին պատրաստում էր իւր գունդը լաջող ճանապարհով լարձակութելու նոցա բանա-կի վերալ, իրան օգնութեան կանչելով նաև Սըրալի լե-րան հովտում գտնուած բանակից մի ալլ փոքրիկ վաշտ, ինքն Միքաղան նախկին փորձից վհատուած անվստահ իւր զօրքի բանակատեղի ամրութեան և նոյն իսկ իւր զօր-քի բանակատեղի ամրութեան և նոյն իսկ իւր զօրքի քաջութեան վերալ՝ իսպառ խոյս տուեց Օշական գիւղից երրորդ օրը և Հրազդան գետն անցնելով մտաւ Շաղ-կունեաց նահանգի խորածոր տեղերը. և այնտեղ մի քանի օրից լիտոյ բոլոր զօրքերի գլխաւոր կառավարիչ Պասկևիչի վերադարձի լուրն առնելով, նախ քան նորա մերձենալն ալդ կողմերին, նա շտապեց վախուստ տալ այնտեղից. և անցնելով Երասխ գետը Մասեաց լերան ստորոտի՝ դժուարանցանելի ճանապարհներով քաշուե-ցաւ գնաց Խոյ քաղաքը:

Սեպտեմբերի 4-ին Երևան հասաւ գեներալ Պաս-կևիչը և իւր բանակը դրեց բերդի դէմուգէմ. բայց իսկոյն պատերազմ չսկսեց. միւս օրը իւր բանակն ա-ռաջ շարժեց դէպի սուրբ Եջմիածին. և նոյն ամսի 11-ին դուրս գալով դէպի արևմտեան կողմը և անցնելով Ար-մաւիրի բլրակի մօտից մի ժամ ճանապարհ հեռու՝ բա-նակ դրեց Շահրիար գիւղի չորս կողմը, որտեղից դէպի հարաւ Երասխ գետն էր և հիւսիսից նորակառոյց Սար-րապատ ամրոցը. այս միջոցին ուստաց բանակը ուտես-տի պակասութեան պատճառով նեղութիւն էր կրում, բայց Տփխիսի ներսէս արքեպիսկոպոսը, որ գտնւում էր զօրքի մէջ Պասկևիչի հետ, մի կերպով տեղեկացաւ թէ նշանաւոր կողբ գիւղում, որ նոցա արևմտեան կողմն էր Երասխի միւս կողմը վեց ժամի չափ հեռու, ցորենի բաւականին տուատ պաշար կալ, ուր իրը ապահով տե-ղում Երևանի սարդար Հիւսէին Ղուլի խանը հաւաքել

Էր իւր զօրքի պիտոյքի համար. ալստեղ էին ամրացած նոյն սարդարի հրամանով և Հալ Աշտարակ, Օշական և Փարաքար գիւղերի բնակիչները. Ներսէսը իւր մարդկանցից մի քանիսին ուղարկեց այնտեղ հայոց երևելիներին իւր մօտ հրաւերելու, որոնք ցոյց տուին թէ ինչ ճանապարհով կարելի էր ձեռք բերել ալդ ցորենի ամբարները:

Այնուհեաև մեծ զօրապետը Կոնստանդին Բէկէնտօրֆի առաջնորդութեամբ ութ հազար հոգուց բաղկացած մի գունդ զօրք է ուղարկում և բերել է տալիս ցորենի ամբարները և լիշեալ երեք գիւղերի ժողովրդներին, որով բաւականոոթիւն ստանալով, մտադրում է առաջ պաշարել այն ամբոցը, ուր էր Նիւսէին խան սարդարի եղբայր Հառան խանը մի քանի հազար բերդապահ զօրքով:

Սեպտեմբերի 15-ին գիմում է ամրոցին հարաւային կողմից և պատնէշ կազմելով նորատունկ ալգումէջ և զասատնի կոչուած չորս մեծ թնդանօթներն այնտեղ յարմարացնելով ոմբակոծում է նրա պարիսպը. որի սաստիկ հարուածներից և պարսպի տեղ քանդուելուց Հասան խանը վախենալով և նորա հետ այնտեղ եղած պահակները, ամսի 19-ին արևմտի ժամանակ երկուշաբթի օրը արևելեան դուռը բաց առաւ և իւր նշանաւոր կրօնակիցների հետ փախաւ. Երբ միւս պահնակներն այս տեսան՝ միմեանց ետևից փախչել սկսան և ազատուել, իսկ ռուսները հալածելով՝ որոնց վրայ հասան մթանը՝ սպաննեցին. բայց չասան խանը նժողութ ձի նստած ազատուեց մտաւ Երևանու բերդը:

Այսպիսի յաղթանակով ռուսաց զօրքերը ամրոցը մտան և առանց մեծ վնասի հանդարտ տիրեցին ու գրտան նորանում առատ ցորեն, գարի և ուրիշ պատերազմական պատրաստութիւններ:

Երրորդ օրը թողնելով այնտեղ վերակացուներ և պահակներ ամրոցի պահպանութեան համար՝ գլխաւոր կառավարիչը շտապեց վերադարձաւ մեծ բանակով դեպի Երևան, և պաշարելով նրա անմատչելի համարուած բերդը շաբաթ օրը՝ կատաղի պատերազմ մղեց և գրե-

թէ գիշեր ցերեկ անդադար շարունակում էր ոմբա-  
ձգութիւնը և բերդի հարաւ արևելքան կողմից Տէմիր  
Բուլազ կոչուած տեղը նոյն թնդանօթներով կործանեց:  
բերդի արտաքին և ներքին պարիսպները վեց օրուան-  
ընթացքում, և եթէ պատահում էր որ ոռումբը ընկ-  
նում էր քաղաքի մէջ տեղը, տեսարանը ահ և երկիւղ  
էր ազդում ամենին, որովհետև թէ տանը դիպչէր և  
ապարանքին՝ հիմնովին քանդում էր. «ով կարող է  
պատմել նոցանում եղած բազմութեան վիշտն ու լու-  
սահատութիւնը. վասն զի դրսի պատերազմը ժամ առ  
ժամ սաստկանում էր և ոմբաձգութիւնից քաղաքը տակն  
ու վրալ էր լինում, բայց քաղաքակետի և Հասան խա-  
նի լամառութիւնը չէր զիջանում. ուստի քաղաքի մե-  
ծամեծները չկարողանալով նոցա հրամաններին անսալ  
հակառակ նոցա պատուէրների բացարին ամրոցի դուռը  
երբ Հասան խանը, Սարդարապատի դէպքի պէս, սկսաւ  
փախչելու վրալ մտածել, ալլ սիալուեցաւ, որովհետև  
ապաստանեցաւ իւր եղբօր կառուցած նորակերտ աղօթա-  
րանին, ուր և կալանաւորուեցաւ:

Ապա երբ գոները բաց արին ութն օրեալ պաշա-  
րումից լետոյ շաբաթ օր ս. Նիկողայոսի տօնի օրը (որի  
համար էլ Օսմանեանց կառուցած մզկիթը տաճար շի-  
նելով սոյն նշանագործ Հայրապետի անուան նուիրե-  
ցին), զօրքը ներս թափուեց քաղաքը, թէն քաղաքի  
պարսպի նոր բացած խրամների անցքը խիստ ընդարձա-  
կել էին. և տիրեցին շատ տարիներից այնտեղ ամբա-  
րուած առատ պաշարը—ցորենը, գարին, բրինձը, կո-  
րեկը և ալլն, պատերազմական զէնքերը և ուրիշ կահ  
կարասիք. լիացան ամենքը ամեն տեսակ հարկաւոր ի-  
րերով և մինչև անգամ բաւականացաւ երկրացւոց սը-  
նունդի և սերմացուի համար:

Այս էլ այսպէս լաջողելուց լետ Պասկեիչը կարգի-  
դրեց ինչ որ հարկաւոր էր ու թողեց բերդի մէջ բա-  
ւականին գօրք պահպանութեան համար և նոցա կառա-  
վարութիւնը լանձնեց Կրասովսկուն, իսկ քաղաքական  
գործերի կառավարութիւնը դարձեալ նորան և բերդա-  
պահին, որոնց օդնական իւր աչալյութեան և երկրի ու-

նսրա բնակիչների հանգամանքներին ծանօթ լինելու համար կարգեց ծփխիսի ներսէս արքեպիսկոպոսին, և ինքն այնուհետև ճանապարը ընկաւ գէպի Դաւրէժ, ուր իւր հասնելուց առաջ իւր զօրքը առանց ընդդիմութեան պարսից կողմից և ամենափոքր հակառակութեան մտել և տիրել էին,

Որից յետոյ Պարսից տէրութեան ժառանգ Արաս Միրզան բոլորովին մէջքը կոտրած և այլ ևս չվստահանալով յուս դնել իւր զէնքի զօրութեան և ուրիշ հնարքների վերայ, ակամայ կամօք անձամբ դիմեց Պասկելի չին և հաճելի թուաց նորա աչքին և հոգալով իւր հալրական աթոռի պաշտանութեան համար՝ տուեց նորան պատերազմական ծախքերի փոխարէն տասն քրօ ոսկի ու արծաթ, որ անում է 80 միլիօն րուբլի թղթադրամ։ Եւ իրեւ նշան հաշտութեան դաշնադրութեան թուղթ գրեցին ու տուին միմեանց, որի մէջ այս էլ կար, թէ ով ոք երկու կողմերի բնակիչներից ցանկանալ միւսը տեղափոխուի՝ երաւունք ունենալ անարգել, և սորա համար Պասկելից կարգում է գվարդիայի գնդի գնդապետ վեհազնեալ աղայ Եղիազար Յովակիմեան Եղիազարեանցին, տալով նորան և գործակիցներ մայեօր իշխան Մովսէս Զաքարեան Արդսութեանցին՝ Յովսէփ կաթողիկոսի եղբօր թոռան, մալիօր իշխան Իվանէ Յովսէփեան Մելիքեանցին, կօլէժմկի ասսէսօր Խսահակ Տէր Առաքելեան Շամազեանցին, զինուորական աստիճանանաւորներ Դաւիթ և Աղէքսանդր Ստեփանեան Ղորդանեանցներին, եւ ուրիշ մի քանիսին հայ աստիճանաւորներից, լանձնելով նորան աղքատների հարկաւորութեան համար տէրութեան գանձարանից հարիւր հազար ուուբլի թղթադրամ որ այն ժամանակ հաւասար էր 25 հազար մանէթ արծաթի։

Երբ նոքա հրաւէր հրատարակեցին Ատրպատականի սահմաններում բնակող հայ ժողովրդեան, ներսէս արքեպիսկոպոսն էլ ուղարկեց նենօքեան Ստեփաննոս արքեպիսկոպոսին եւ Նիկողայոս վարդապետին Աթոռի եւ իւր կողմից ազատութիւն եւ փրկութիւն քարոզելու։ Ալդ առթիւ ներսէսը հետեւալ առաջադրութիւնն

է ուղղում Կջմիածնալ կառավարութեսն, որի Տալրագոյն կառավարել Եփրեմ Կաթողիկոսի բացակալութեան պատճառով ինքն էր նշանակուած:

« Ոչ կամիմ թագուցանել ի Զէնջ. զի եհաս առիս « գիր՝ զի որդին աղալ Յօվակիմի գըէ առ Բարսեղ Եպիսկոպոսն, իբրև զի ի լինել Խաղաղութեան ազգք Հայոց « եղեալք լիշանութեան պարսից՝ թէ ոչ նախ յօժա « ըեսցին ելանել լիւրաքանչիւր տեղեաց և անձանց ընդ « Երասիս ի սահման Երևանալ կամ Նախիջևանալ, կա « ըելի է, զի տպաշաւել ունիցին զկնի, առ որ և ինքն « Բարսեղ Եպիսկոպոս ընդ աղալ Մարգարին Եղօլեան « գնացեալ է ի Թէվըիզ:

« Ես ունիի զկամս ՚ի վաղուց առաքելոյ Հրաւիրակս « առ ամենայն հայազնեալս անց կողմանց, այժմ մինչ « ալսպէս լինի լսելի, կամիմ ես ընդ Ենօքեանն Ստե « փաննոս Եպիսկոպոսի զՅովսէփ բազմաշխատ և բարձր « արժանապատիւ վարդապետն զերկոսին ՚ի միասին լը « ղել, գնալ նախ ՚ի Դաւրէժ, և ապա անդուստ ուր « արժան իցէ ջան դնել զողորմելի մերազնեալս հաւա « քել ՚ի մի աստ ՚ի հալրենիս արարատալ, զի մի զկնի « ապաշաւանք վշտացուցեն զսիրտս մերոց ներգալից « և ապագալից, առ որ խնդրեմ, զի թէ չիցէ ընդգէմ « ձերոց ենթադատութեան լղեսջիք զնոսա առ իս առ « վաղիւն, կամ ի 20 ամսորս, այնպէս զի եկեսցեն և « անցեալ աստուստ աճապարեսցեն ՚ի Դաւրէժ առանց « դառնալոյ ալդը լետսոս:

« Համ. 7. 1827. դեկ. 18. յԵրևան:

Կջմիածնալ կառավարութիւնը նկատելով, թէ իւր ամենագործօն անդամներից մէկի՝ Յովսէփ վարդապետի բացակայութեամբ շատ գժուար պիտի լինի գործերի կառավարութիւնը առաջ տանել Հետևեալ յայտարարութեամբ խնդրում է Ներսէս արքեպիսկոպոսին թոյլ տալ Յովսէփ վարդապետին մնալու իրան պաշտօնի մէջ, և նորա փոխարէն Ենոքեան Ստեփաննոս արքեպիսկոպոսին ուղեկից դնել Խօյի նուիրակ Նիկողայոս վարդապետին և կամ Տաթևացի Գէորգ վարդապետին.

« Լստ ազգասէր ենթադատութեան սրբազնու-

« թեանդ և վեհազնէի յաղագս հրաւիրելու զմերազ-  
 « նեալսն ըոդ հովանեաւ դրօշակի Քրիստոսսաէր Կալսե-  
 « րութեանն ամսոլս 18 համար 7, բացալայտեալ կա-  
 « ռավարութեանս գոհութեամբ զԱստուծոյ օրհնեմք  
 « զցանկալի կեանս ձերում բարձր Սրբազնութեան, ար-  
 « դարև ամոռոն ազգօքն է ամոռ և ողորմելի ազգ մեր՝  
 « որք ցրուեալք են զառօրեալն հազիւ կարեն նկատել՝  
 « ուր թէ զապառնին նշմարել, վասնորոյ ըստ ամենալ-  
 « նի համաձայն է կառավարութիւնս ազգաօգուտ սուրբ  
 « ենթադատութեան ձեր թէութիւն ունելով միայն  
 « զայս զբարձր արժանապատիւ Յովսէփ վարդապետն ի  
 « հարկաւոր միջոցիս հեռացուցանելն աստի. ըստ որում  
 « և համար 6, գրեցեալ առաջադրութեամբ բարեհա-  
 « ճեալ էք մինչ ի լրութիւն ալսմ ամսոյ, զներսնային  
 « բոլոր հաշիւսն զանազան դիմաց վերջացուցմամբ ի  
 « լոյս ածել յալտ է՛ որ առանց ներկայութեան Յովսէփ  
 « վարդապետի գուցէ առանց հիման լիցին ամենալն  
 « քննելիք։

« Վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմք՝ եթէ  
 « կարևոր իցէ շնորհել զՅովսէփ վարդապետն կառավա-  
 « րութեանս և որպէս տնօրինեալ էք զԱրքեպիսկոպոսն  
 « Ենօքեան ընդ նմին ընկերակից զնիկողալոս վարդա-  
 « պետ նուիրակ Խօյու, որ ծանօթ է կողմանցն կամ  
 « զԳէորդ վարդապետն Տտիւսացի ընկերացուցանել ընդ  
 « լիշեալ եպիսկոպոսին՝ թուի թէ ալսպիսեաւ ազգալին  
 « հոգացողութիւնք և ամոռալին գործք միով շաւզօք  
 « վերջաւորին՝ ալլն որպէս բարեհաճնութիւն է սուրբ  
 « կամաց ձերոց։

Ներսէս արքեպիսկոպոսը ստանալով կառավարու-  
 թեան ներկայ յալտարարութիւնը՝ նոյն թուի ու ամսի  
 21-ին № 9 ուղղած գրութեան մէջ (որի գլխաւոր մա-  
 որ ուրիշ առարկալի վերաբերելով առաջ կը բերուի ի-  
 րան պատշաճեալ տեղը) խնդրում է Յովսէփ վարդապե-  
 տի փոխանակ ողնիկողալոս վարդապետն լղել կանխաւ-  
 զի երթիցեն ընդ Ենօքեանին ի Դաւրէժօ։

Ահա միմեանց լորդօրելով գուրս եկան քաղաքնե-  
 րից, աւաններից եւ գիւղերից խումբ խումբ, հալրերը

որդւոց հետ, մալրերը աղջկանց հետ, առանց հոգս քաշելու իրանց անշարժ ստացուածքների մասին և գնացին ոմանք Ղարաբաղ, ոմանք Նախիջևան և ոմանք Երևան, ոուսաց սահմաններում հանգիստ առնելու Եղիպտական ծառալութիւնից, նորօգելու իրանց նախնիքների աւերակ քաղաքները, դաստակերտներն ու շէները:

Գ. ք. Ա.

## Ա. ՆԵԶՅՄԵԾՆԻ ՆԱՄԿԿՆԵՐ

ՄԵծապատիւ Հօր Եփրեմայ

Դ. Ա. Նազարեանց ողջըն.

Զգրեալս ի 15 մայիսի անցելոյ գիտեմ, ստացեալ Ձեր անշուշտ ձեռամբ պարոն Դաւթի Դիլանեան, վասն զի ընկալեալ է իմ վազու զպատասխանի նամակիս առ նա, յորում առ եղեալ էր և Ձերն. այլ թէ զի՞նչ ինչ արդեօք խաիանարկու ձեզ եղեւ ցարդ, պատասխանելոյ ինձ, անդիտանամ բնաւէ Գուցէ դիպեցան ձեզ ինչ ինչ՝ որբ կարող են 'ի չքմնզ գործել զլրելութիւն ձեր, և հաշտեցուցանել զմեզ ընդ ձեզ յանուն նախնի մերոյս բարեկամութեան: Մեր գմնեայ անդորր է խիզճ՝ կատարելով զոր առ ձեզ պարտականութիւն բարեկամական, զմերն ասեմ ձեզ ուստեալ գերմանական հաւատարմութեամբ: Անցը նորանոր առ մեզ անցին, կատարեցան ուխաք սրտից մերոց, զին աւուրցն ասեմ և զմեծափափագս. է՛, է՛ ապաբէն առիթ ուրախութեան մեզ՝ որբ սիրողը են և ճաճաչողք հայրենեաց: Ուսիմբ արդէն կաթողիկոս զներաէս՝ այր այս՝ հանձարաւոր, աղքասէր և արժանաւոր բան զամենեսին՝ որ առ մեզ հոգեւորականք: Գուցէ՝ արասցէ սա ինչ ինչ ի պիտանեացն և ի կարևորաց մերոյս տառապեալ ազգի: յուսասցուք աղաչելով զնստուած՝ զի յերկարեսցէ զամս կենաց պատուական ծերունւոյս:

Խնդիր իմ առ ձեզ առ ժամս է, զի յանուն մերու Ճշմարիտ բարեկամութեան աշխատ լիջիք օգնական ինձ Լի-